ես իմ հավատից չեմ հրաժարվի, իսկ դու ինձ հետ ինչ որ անելու ես, արա: Իշխանը հրամայեց նրան էլ բանտ նետել և ոտքերը դնել կոճղերի միջև, որ նշանակում է թոմրուզ:

Ապա եկավ նրա մահմեդական ընկերը, տեղեկացավ, թե եկել տարել են փաշայի մոտ և իմացավ, որ հավատի համար են տարել: Գնաց իշխանի մոտ, աղաչեց, որ բաց թողնի նրան և ասում էր, թույլ տուր դրան թող գնա դժոխք, դրա թրքությունը մեր ինչի՞ն ա պետք: Այս ասում էր, թերևս ազատելով փախցնի նրան Երևան գնալու: Նրան չլսեցին, այլ անարգանքով սաստեցին նրան (որ էլ չխոսի):

Գնաց բանտը, համբուրում էր նրան, լալիս էր ու ասում՝ վայ ինձ, որդյակ, երանի թե քեզ չէի տեսել, քան թե տեսա տառապանքի մեջ: Երանելի Բաղդասարը նրան ասում է՝ աղաչում եմ քեզ, վարպետ, Աստծու սիրուն և քո որդիների արևին, ինձ մի քահանա բեր, որպեսզի ինձ հաղորդի, գիտեմ, ինձ կենդանի չեն թողնի: Թուրքը ելավ գնաց, գտավ Հակոբ անունով մի քահանա, որ երբեմն մաքսապետ էր եղել. եկավ հաղորդեց և զգուշացրեց, չվախենալ մահից:

Հաջորդ օրը հանեցին բանտից, կանգնեցրին իշխանի առջև: Իշխանը հարցրեց, թե խելքի եկա՞ր, թե դեռ խելագարության մեջ ես: Բաղդասարը ասաց՝ ես ի բնե խելոք էի, բայց եթե քեզ լսեմ, այդ ժամանակ կխելագարվեմ: Այդ ժամանակ իշխանը բարկացավ ու ասաց՝ դու իմ խոսքերը չընդունեցիր, քանի որ ես կամենում էի քեզ մեծացնել, իսկ դու այդ անարգեցիր: Մանուկն ասաց՝ ես հենց սկզբից ասացի, թե արա, ինչ որ կարող ես, քանզի ես պատրաստ եմ:

Իշխանը բարկանալով՝ մահմեդականներին հրամայեց՝ քաղաքից դուրս հանել նրան ու սպանել: Նրան առան տարան, ճանապարհին ծեծում, բռնցքահարում էին, թքում: Իսկ նա գնում էր Սաղմոս երգելով և ասում էր. «Երանի այն ամենին, որ երկյուղում են տիրոջից և գնում են նրա ճանապարհով*»:

Առան տարան այն բլուրը, որ կոչվում է Սուրբ Նշան և այնտեղ սրբի գլուխը կտրեցին: Իշխանի հրամանով քրիստոնյաները բարձրացրին սրբի պատվական մարմինը գլխի հետ միասին նաև արյունաշաղախ հողը և տարան ընդհանուր գերեզմանատունը՝ եկեղեցու հարավային կողմը, որմի տակ թաղեցին սրբին: Օրվա

*Սաղմոս ՃԼԷ, 11:

ժամը ութն էր և պայծառ արեգակ: Ահա մի բոլորակ գունդ ինչպես վառված հուր պատռելով իջավ երկնքից և կպավ եկեղեցուն սփռվելով սրբի գերեզմանի վրա: Բազմաթիվ մահմեդականներ այս տեսնելով՝ երկմտեցին հավատքից: Իսկ ես այնտեղ լինելով մի տարի՝ սրբի նահատակության ժամին չպատահեցի, այլ մյուս օրը հարցրի նրա թուրք ընկերոջը, նա ամենը պատմեց՝ ծնունդից մինչև նահատակություն, և գրեցի, ինչպես լսեցի:

Սուրբ Բաղդասարը վախճանվեց հազար հարյուր տասներեք (1664) թվին Սուրբ Հռիփսիմյանների օրը: Երեք տարի հետո նահատակվեց զգիր Հակոբը և դրվեց Բաղդասարի գերեզմանի մոտ:

ԳԼՈՒԽ Կ
ՇՆՈՐՀԱՎՈՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս կինը մարերի* երկրից էր Շնորհավոր անունով՝ հավատով քրիստոնյա էր, ազգությամբ՝ հայ: Սա այրի էր, չուներ ուստր կամ դուստր: Իր եղբոր հետ բնակվում էր միևնույն տանը, ձեռագործով էր զբաղվում և դրանով ապրում էր: Սատանայի փորձանքներից մեկը պատահեց՝ մի քուրդ չար երեսով ցանկացավ նրան, ուստի նրա մոտ ուղարկեց կավատ պառավների՝ համաձայնեցնելու նրա չար կամքին՝ պառկելու նրա հետ: Իսկ բարեպաշտ կինը անարգանքով հետ էր վերադարձնում նրանց:

Մի օր քուրդը ինքն է գալիս նրա մոտ. խոսում է զազրելի ու լկտի խոսքեր: Պարկեշտ ու սրբասեր կինը նրան ասում է. «Ով քուրդ, հեռացիր ինձնից, գուցե թե իմ եղբայրը գա քեզ տեսնի ինձ հետ խոսելիս, դաժանորեն սպանի քեզ»: Մինչդեռ նա այս խոսում էր, ինչ-որ մարդիկ եկան այնտեղ, և քուրդը ելավ, գնաց: Մի օր Շնորհավորը գնում էր իր գործին, ահա հանդիպեց այն շուն քուրդը, ձեռքը գցեց նրա օձիքը, քաշեց դեպի իրեն, կատաղած կամենում էր համբուրել, իսկ պարկեշտ այն կինը խփեց նրա երեսին, ճանկռեց ու թքեց: Շնորհավորի եղբայրը հեռվից տեսավ, որ իր քույրը բռնության է ենթարկվում, շտապով հասավ նրան և ասաց. «Անիծված, էդ ի՞նչ աղբ ես լափում, մի՞թե անտեր է դա»: Եվ հանելով դաշույ-

*Մարերը համարվում են քրդերի նախահայրերը: